ՄԵԾ ՀԱՅՔԻ ՊԱՐՍԿԱՀԱՅՔ ԱՇԽԱՐՀՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Աշխարհացոյցում» (ընդարձակ խմբ.) Պարսկահայքի մասին ասված է. «Է[1]. Պարսկահայք յելից Կորճէից, եւ ցագիտատարար (?)[2] մտանէ ընդ մէջ Ատրապատկանի[3], եւ լերինն Տաւրոսի այնր կողման որ կոչի Կոհի-Նիհորական[4], մինչեւ ցԵրասխ գետ[5]։ Ունի գաւառս ինն՝ զԱյլի[6], որ կոչի Կուրիճան[7], զՄարի գաւառ, զԹրաբի[8] գաւառ, զԱրիսի[9] որ է Ովէա[10], զԱռնա[11],

---

1 Այսինքն՝ Մեծ Հայքի յոթերորդ աշխարհը։

2 Հ. Մարկվարտը գտնում էր, որ «եւ ցագիտատարար մտանէ» անհասկանալի արտահայտությունը պետք է նշանակեր «եւ սեպաձև մտնում էր» (Հ. Մարկվարտ. Պարսկահայք նահանգը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1, էջ 207)։ Համաձայն Գ. Աբգարյանի «ցագիտատարար»-ը աղավաղված բառ է։ Նրա կարծիքով «Աշխարհացոյցի» սկզբնագրում հավանաբար եղել է «զագիտայտարար» (լատ. sagitta=«աղեղ» բառից), որը պետք է նշանակեր՝ աղեղնաձև, աղեղնակերպ, սեպաձև։ Բառի աղավաղումը գրիչների կողմից կատարվել է երկաթագիր տառերի Զ>Ց, Գ>Զ, Ց>Տ շփոթի հետևանքով (տե՛ս Հ. Մարկվարտ. Նշվ. աշխ., էջ 185)։

3 Անշուշտ պետք է լինի «Ատրպատականի»։

4 Ճիշտը՝ Կոհ-ի Նիհորական։

5 «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրությունում սույն հատվածն ունի ներքոհիշյալ պատկերը. «Եւթներորդ՝ Պարսկահայք յելից կայ Կորճէից առ Ատրպատականիւ» (Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 349)։ Որոշ ձեռագրերում «առ Ատրպատականիւ»-ի փոխարեն «առ Ատրպատականաւ» է (К. П. Патканов. Армянская география VII века. СПб., 1877, с. 19)։

6 «Աշխարհացոյցի» ձեռագրերում հանդիպում է նաև Աղու, Այլին տարընթերցումներով։ Որոշ ձեռագրերում գավառանունը բացակայում է։ Այլ աշխատություններում գավառանունը հայտնի է Այլի, Ելի (Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ. Կոստանդնուպոլիս, 1852, էջ 292, 313), Եղի (սեռ.՝ Եղոյ), Էգի (սեռ.՝ Էգոյ) (Գիրք Թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 146, 149), Կայելոյ (կարդա՝ Այլոյ) և Կայղոյ (կարդա՝ Այղոյ) (Ուխտանես. Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, հատ. III, ԼԲ) գրությամբ։

7 Հանդիպում է նաև Կուրիճան, Կոռճիան, Կուռէճան, Կուիճան, Կոուիծան, Կորիճան, Կուռիչան տարընթերցումներով։

8 Հանդիպում է նաև Թրափի, Թրայփի, Թրակի, Թափի, Թափիու տարընթերցումներով։ Թ. Արծրունու մոտ՝ Թըար (էջ 292)։

9 «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրությունը Արիսին չի հիշում։

10 Ըստ երևույթին «Արիսի, որ է Ովէա» կապակցությունը աղավաղվելով «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրությունում տվել է Այուերս, Այուերսն, Ացուերս, Ըստես, Ուես տարբերակները։ Ըստ Հ. Մարկվարտի «Ովէա»-ն հավանաբար «Ովէսա»-ի աղավաղված ձևն է (Նշվ. աշխ., էջ 185)։

11 Հանդիպում է նաև Առնայ, Առա, Ըռնա, Արնայ, Ընոա տարընթերցումներով։ Այլ սկզբնաղբյուրներում՝ Ըռնայ գավառ (Թովմա Արծրունի, էջ 283, 294), Առնայ (սեռ.՝ Առնայոյ) (Գիրք Թղթոց, էջ 146), Առան (սեռ.՝ Առանոյ) (Նույն տեղում, էջ 149), Առան (սեռ.՝ Առանայ) (Նույն տեղում, էջ 151)։ Ուխտանեսի պատմության մեջ գավառանվան սեռական հոլովաձևը հանդիպում է Առնոյ (ուղղ. Առնայ) գրությամբ (II Լ, էջ 55, ԼԲ, 57, ԼԷ, 64)։

զՏամբէթ[12], Զարէհւան[13], զԶարաւանդ[14], զՀեր[15]։ Ունի յերէոց[16] զցիռ եւ զայծեամն»[17]։

Պարսկահայք աշխարհի հանդես գալու ժամանակի ու հանգամանքների, ինչպես նաև տեղադրության հարցերը մեծ դժվարություն և միաժամանակ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի պատմական աշխարհագրության համար։ Սակայն «Աշխարհացույցի» նկարագրությունը զուրկ է տեղագրական մանրամասներից, ուստի գավառների տեղադրությունը, շատ դեպքերում թեականությամբ, կարելի է կատարել լոկ օժանդակ աղբյուրների և տեղագրագիտական նյութերի հիման վրա։ Պարսկահայքի առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Ղ. Ինճիճյանը կարծում էր, որ աշխարհի Հեր և Զարևանդ գավառների հիշատակությունը որոշ դեպքերում նույնանում է Պարսկահայքին[18]։ Հ. Մարկվարտի ենթադրությամբ, Փավստոս Բուզանդի հիշատակած այն գավառները, որոնք Հայաստանից անջատվելով ուղղակի պարսից տիրույթներին միացվեցին, պետք է հետնագույն Պարսկահայք նահանգը կազմեին[19]։ Հ. Հյուբշմանը, անդրադառնալով Պարսկահայք տեղանվան առաջացմանը, գրել է. «Ուստի այս անունն ուշ ատեն և թերևս հուն. Περσαρμενία (Հայաստանի բաժանման ատեն՝ 387-ին Խոսրով թագավորին, 428-ին Պարսից ինկած արևելյան բաժինն) անվան վրայեն և «Դ. Հայք» ու «Բարձր Հայք» անվանց նմանությամբը մեջտեղ ելած է»[20]։

Պարսկահայքի ուսումնասիրության ասպարեզում որոշակի ծառայություններ ունեն Ղ. Ինճիճյանը, Հ. Հյուբշմանը, Հ. Մարկվարտը, Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և Թ. Հակոբյանը։ Նրանցից Հ. Մարկվարտը, ինչպես վերը տեսանք, նրա քննությանն է նվիրել իր «Պարսկահայքի նահանգը» ուսումնասիրությունը, որը թարգմանել և հրատարակել է Գ. Աբգարյանը և որին բազմիցս կանդրադառնանք շարադրանքի ընթացքում։ Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը իրենց աշխատություններում այլևայլ կապակցություններով

---

12 Հանդիպում է նաև Տամրեր, Տայրերս, Տամրերս, Սանրեր, Տանրեր, Տամրատ, Տարերս տարընթերցումներով։ Առնայ և Տամրեր գավառանունները № 1717 ձեռագրում աղավաղվել են և առաջացրել «Առատարերռ» անունը, որ ժողովրդական ստուգաբանության արդյունք է։ Մեր կարծիքով և՛ Տամրեր, և՛ Տամրեթ կամ Տամրատ ձևերը ճիշտ են։

13 Հանդիպում է նաև Զարեհանան, Զորայ հաւան, Զարեհաւան, Զարէհաւան, Զարիհուան, Զարեհուան, Զահրեան, Զարհեան, Աբեհաւան, Զարահաւան տարընթերցումներով։ Ուխտանեսի պատմությունը պահպանել է նաև Զարեհանք (սեռ.՝ Զարեհանից) գրությունը (I, Հ, էջ 100), իսկ Միխայել Ասորու երկում հանդիպող Zarakvan-ը պետք է կարդալ Zaraxavan (Chronique de Michel le Syrien, ed. J. B. Chabot, II. 3, Paris, 1904, p. 459 b 39)։

14 Հանդիպում է նաև Զարուանդ, Զարաւանտ, Զաւանդ, Զարանդ, Արաւանդ, Զորաւանդ տարընթերցումներով։ Հովհաննես Դրասխանակերտցին պահպանել է «Զարեանդ» անվանաձևը (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 289), որը կա նաև Սեբեոսի (Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 126), Ղևոնդի (Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 102, 134) և Ասողիկի (Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 116) աշխատություններում։

15 Ձեռագրերում հանդիպում է նաև «Հէր», իսկ Թովմա Արծրունու մոտ՝ «Խեր» (Խերական դաշտ) գրությամբ (էջ 296)։

16 Հանդիպում է նաև «էրէչ» տարընթերցումով։

17 Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 32։ Տե՛ս նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 1245 ձեռագրի 24բ թերթը։ Ձեռագրում Զարաւանդ գավառանունը աղավաղվել է և դարձել Զղքարաւանդ։

18 Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 151։

19 J. Marquart. Ēranšahr, Berlin, 1901, S. 109.

20 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, թարգմանեց Հ. Բ. Պիլեզիկճյան. Վիեննա, 1907, էջ 90։

անդրադարձել են Պարսկահայքին[21], սակայն այդպես էլ փորձ չեն արել բացատրելու նրա անվան ծագումը։ Ս. Երեմյանը Պարսկահայքի առաջացմանը և նրա գավառների տեղադրությանը անդրադարձել է իր «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի աշխատության մեջ։ Նրա կարծիքով, «Աշխարհացույցը» Պարսկահայքի անվան տակ հասկանում է **Նոր Շիրական բդեշխության** տերիտորիան և նրան է միացնում Հեր և Զարեվանդ գավառները։ Զարգացնելով իր միտքը, նա գրում է, որ «Պարսկահայք անվան առաջին մասը «Պարսկա» (իմաստավորված՝ պարսիկ բառով), անշուշտ կապ ունի ուրարտական ժամանակաշրջանի Parsua Barsua երկրի անվան հետ, որը այն ժամանակ գտնըվում էր Կապուտան (Ուրմիա) լճից հարավ»։ Ավելի ուշ նա նշել է, որ «Արտաշիսյանների և Արշակունիների թագավորության օրով կազմել է Նոր Շիրական բդեշխության հիմնական մասը։ Մեծ Հայքի 385-ի (387) բաժանումից և Նոր Շիրականը Սասանյան Պարսկաստանին (Ատրպատականին) միացվելուց հետո, այդ տարածքը կոչվել է Պարսկահայք»[22]։

Պարսկահայք աշխարհի ձևավորման, անվան բացատրության հարցերին պատասխանելու համար առաջնային նշանակություն ունի նրա գավառների տեղադրությունը։ Հ. Հյուբշմանը, ելնելով այն փաստից, որ Հեր և Զարևանդ գավառները ամենահյուսիսայիններն էին, գտնում է, որ գավառների թվարկումը կատարված է հարավից արևելք ուղղությամբ, ուստի Այլի Կուրիճանը, ըստ նրա, Պարսկահայքի ամենահարավային գավառը պետք է լիներ[23]։ Թերևս այդ տեսակետի վրա հենվելով Հ. Մարկվարտը, անդրադառնալով երկրամասի գավառների տեղադրությանը, գրել է, որ «այնուամենայնիվ հայտնի է, որ գավառների թվարկումն ընթանում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք»[24]։ Թե որքանով է համապատասխանում այդ իրական դասավորությանը, ցույց կտա ստորև կատարվող պատմաաշխարհագրական քննությունը.

Որքան էլ Պարսկահայքի գավառների տեղադրությունը անծանոթ է և անորոշ, այնուամենայնիվ որոշ գավառների տեղորոշումը հստակ է։ Այսպես, Պարսկահայքի Հեր գավառը, որ ներկայիս Խոյ քաղաքի շրջակա տարածքն էր[25], ըստ Ս. Երեմյանի պետք է համապատասխաներ ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի արձանագրության Ulḫu (հայերեն՝ Ուլխ) քաղաքին[26]։ Հ. Մարկվարտի կարծիքով հայերեն «Հեր» և «Խեր» ձևերը առաջացել են մեդական Hêō կամ Xêō ձևից[27]։ Կոստանդին Ծիրանածինը Հեր քաղաքի անունը հիշում է Խերտ (Χερτ) ձևով[28]։ Կարծում ենք, տարակուսանքների տեղիք չի տալիս նաև Զարևանդ կամ Զաբավանդ գավառի տեղորոշումը։ Որոշակի է նաև Այլի կամ Կուրիճան գավառի տեղադրությունը։ Կոտուր-Զագրոշի լեռնաշղթայի կամ Վասպուրականի լեռների արևելյան լանջին գտնվում է Էլի բնակավայրը, որն անկասկած նույնական է պատմական Այլիին կամ Կուրիճանին։ Սույն տեղադրությունը հաստատվում է Թովմա Արծրունու տեղեկություններով։ Վասպուրականի իշխան Աշոտի եղբայր Գուրգենը, խույս տալով արաբական զորքերից անցնում է «ի գաւառն Որսիրանից... և բանակեալ կային ի լե-

21 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908; Հ. Մանանդյան. Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ.—Հակոբ Մանանդյան. Երկեր. հ. V, Երևան, 1984։

22 Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 77։ Նույնի՝ Պարսկահայք, ՏԻ՛Ս ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 208։

23 Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 210։

24 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 186։

25 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. Բարիզ, 1960, էջ 16, 32։

26 Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 63։ Հայերեն ավելի ճիշտ կլիներ «Աղխ»։

27 Jos. Markwart. Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 209.

28 Կոստանդին Ծիրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 10։

րինն, որ ի վերայ գեղջն Թուայ, ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ, զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի, եւ անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանց Աղբակոյ, Զարէհվանի, եւ Ակէոյ. եւ ի լեռնակողմանցն Աղղոյ, եւ Ոանն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն եւ անդր»[29]։ Գուրգենը փորձում է բանակցել Բուղայի հետ, ուղարկելով վերջինիս մոտ իր մորը՝ Վասպուրականի բամբիշ Հռիփսիմեին։ Մինչ Բուղան ձգձգում էր բանակցությունները, Գուրգենի զորաջոկատր հետապնդող զորքերը «...եկին հասին ի սահմանս երկրին ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք։ Եւ բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ։ Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ, եւ Ապուհեշմ Եզոյ տէր, եւ ընդ նոսա զօրք Համդոյի պարսից ամիրայի»[30]։ Գուրգեն Արծրունու փորձերը՝ խաղաղ համաձայնության գալ հակառակորդի հետ, անհաջող են անցնում, ուստի հայկական ջոկատը, որ բաղկացած էր ընդամենը 900 մարտիկներից, ստիպված էր կենաց և մահու ճակատամարտ տալ արաբական 15000-անոց զորաբանակին։ Չնայած ուժերի գերանհավասարությանը, հայերը փայլուն հաղթանակ տարան, իսկ հակառակորդը կորցրեց 1800 զինվոր։ Այնուհետև հայերը «հարին հալածեցին եւ ի փախուստ դարձուցին զզօրսն. եւ կէսքն զհետ մտեալ փախստէիցն մինչ թանձրացաւ մութ գիշերին, ճանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի եւ պարսից»[31]։ Առաջնորդվելով այս տեղեկություններով, Հ. Մարկվարտը իրավացիորեն եզրակացրել է, որ Ելին, ինչպես և Ատրպատականն ու Պարսկաստանը գտնվում էին Որսիրանք գավառից արևելք, իսկ Ելին հիշյալ երեք շրջաններից ամենահյուսիսայինն էր, որը չէր պատկանում բուն Ատրպատականին և կից էր անմիջապես նրա հյուսիսային սահմանին[32]։ Գերմանացի հայագետի փայլուն տեղադրությամբ Որսիրանք գավառը համապատասխանել է Նեհիլ կամ Նիհելչայ գետի ավազանին կամ Գավառ Նահիեին[33], որի հենց հարևանությամբ էլ գտնվում է Էլի բնակավայրը[34]։ Հ. Մարկվարտի եզրակացության օգտին է խոսում Թովմա Արծրունու մեկ այլ հաղորդում ևս, ըստ որի Վասպուրականի իշխան Գագիկի եղբայր Գուրգենը տիրույթ է ստանում «զԱռնիոտն եւ ի ձորոյն Ընձահից մինչեւ ցերկուս ամրոցսն Սրնգայ եւ Ջըղմարայ...» և պայքար սկսում արաբների դեմ. «Որով եւ առ իսկ զգաւառն Ելի, եւ վանեալ զբնակիչս նորա սպառ սպուռ ջնջեաց զյիշատակ նոցա յերկրէ»[35]։ Դժվար չէ տեսնել, որ պատմական Այլի-Ելի գավառը գտնվել է իրոք Ջըղմարի և Սրինգի մերձակայքում, համապատասխանում է Էլիի շրջակա տարածքին, իսկ Էլիի անվանումը ոչ թե պատահական համընկնում է Այլի-Ելի գավառանվան հետ, այլ պատմական իրողություն։ Ս. Երեմյանը առավել որոշակիացրել է գավառի սահմանները։ Ըստ նրա Այլին ընդգրկել է Նազլուչայ գետի հովիտը՝ Բարադոստ մահալը։ Միջին դարերում Այլին կոչվել է Էլի և ընդգրկել միայն նրա արևմտյան լեռնային մասը, իսկ բնակավայրերից հայտնի են եղել Էլին, Սուրենապատը (այժմ՝ Սուրարան), Կարենիսը և Դաստակերտը (այժմ՝ Դաստագիր)[36]։

---

29 Թովմա Արծրունի, էջ 159—160։

30 Նույն տեղում, էջ 160—161։

31 Նույն տեղում, էջ 165—166։

32 Հ. Մարկվարտ, նշվ. աշխ., էջ 187։

33 Նույն տեղում, էջ 187—191։ Հ. Մարկվարտը նշում է, որ Նիհել կամ Նեհիլ գետի անունը քրդական է և ուղղակի նշանակում է «ձոր» (էջ 190)։

34 Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։

35 Թովմա Արծրունի, էջ 313։

36 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 35։

Առայժմ բաց թողնելով գավառի սահմանների ճշգրտումը, որ շատ բանով կախված է Պարսկահայքի մյուս գավառների տեղագրությունից, կանգ առնենք մի հարցի վրա։ Եթե Հ. Հյուբշմանի և Հ. Մարկվարտի տեսակետը Պարսկահայքի գավառների նկարագրության հերթականության մասին ճիշտ է, ապա ստացվում է, որ Այլի-Կուռիճանը ծայր հարավային գավառն է[37]։ Կարծես թե Այլիի վերաբերյալ նման տեսակետը բխում է Թովմա Արծրունու վերը բերված այն վկայությունից, թե հայերը արաբներին քշեցին «...ի կողմն Հէլոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի եւ Պարսից»[38]։ Ցավոք, ինչպես շուտով կհամոզվենք, նշանավոր հայագետների նշած սկզբունքը չի գործում։ Նկարագրության առաջին Այլի կամ Կուռիճան գավառը Պարսկահայքի ամենահարավային գավառը չէ և ընկած է նրա գրեթե կենտրոնում։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գավառի մյուս՝ Կուռիճան անվանումը։ Հնարավոր է, որ առավել նախնականը Կոռճիան տարընթերցումն է, որ պահպանել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2019 ձեռագիրը։ Այդ դեպքում անկասկած է, որ նրա «-ան» վերջավորությունը իրանական հոգնակիակերտ մասնիկն է, հետևաբար գավառանվան հայերեն ձևը կլիներ **Կոռճայք** կամ **Կոռճէք**, որը չի նույնանում Կորճայք աշխարհի հետ և ունի միանգամայն այլ բովանդակություն։ Այս հանգամանքը գոնե մասամբ նկատել է Հ. Մարկվարտը, որ ելնելով Թովմա Արծրունու «քանզի խառն դրակցությամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ եւ հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին մարզպանն, եւ որ զԿորճէիցն ունէին պգործաւարութիւն։

Ելանե մարզպանն ի վերայ նոցա, եւ յինքն հանէ զՏամբեր եւ զԸռնայ գաւառ, եւ որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին»[39] հաղորդումից, ցույց է տալիս, որ Արծրունու մոտ Պարսկահայք և Կորճէք (Կորճայք) անունները միևնույն նշանակությունն ունեն։ Եվ իրոք, Կորճէից գործակալներից գրաված Տամբեր, Առնա կամ Ըռնա գավառները, Ապուջափրի բերդը և Վհրի (?) քաղաքը գտնվում էին Պարսկահայքում։ Հ. Մարկվարտը հակված է կարծելու, որ Կորճէք անունը Թովմա Արծրունու կողմից կյանքի է կոչվել Փավստոս Բուզանդի օրինակով և ավելի շուտ կրում էր ազգաբնակչության այն ժամանակ տիրապետող մեծամասնության անվան կնիքը[40]։ Շարունակելով իր միտքը զարգացնել, նա գրում է. «Ելնելով վերոհիշյալից մենք կարող ենք Արծրունու հետևյալ նախադասությունը («և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց», դպր. 3, գլ. ԻԹ, էջ 259) թարգմանել ըստ իմաստի այսպես. «Կորճէք կամ Պարսկահայք աշխարհը»[41]։ Կարծում ենք, որ ճիշտ չէ Հ. Հյուբշմանը, երբ հայտարարում է, թե Թովմա Արծրունու տեղեկությունը հստակ չէ վերջինիս՝ «Աշխարհացույցի» Կորճայքին թե Փավստոս Բուզանդի հիշատակած Կորճէքին վերաբերելու խնդրում[42]։ Մեր կարծիքով, ինչպես ավելի ուշ կհամոզվենք, Կորճէքն ու Պարսկահայքը ընդհանրապես նույնանում են, սակայն Փավստոս Բուզանդի և Թովմա Արծրունու հաղորդումներում Կորճեքը համապատասխանում է Պարսկահայքի հյուսիսային հատվածին։ Կորճէքի և Պարսկահայքի միացյալ հիշատակությունը վերոբերյալ հաղորդման մեջ ոչ թե պայմանավորված է Թովմա Արծրունու աշխարհագրական անորոշ պատկերացումներով, այլ վաղ միջնադարում առկա վարչաքաղաքական որոշակի կացությամբ։ Ենթադրել,

---

37 Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 210։ Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 186. «Ամենահյուսիսային գավառը՝ Հեր կամ—Վանի բարբառով—Խեր գավառն է» և՝ «Դեպի հարավ-արևմուտք ձգվող ամենահեռավոր գավառներն էին՝ Այլի (Ելի, Եղի) կամ Կուռիճան և Թրաբի»։

38 Թովմա Արծրունի, էջ 166։

39 Նույն տեղում, էջ 291։

40 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 197։

41 Նույն տեղում, էջ 199։

42 Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 86—87։

որ Արծրունյաց պատմիչը տեղյակ չի եղել աշխարհացույցյան Կորճայք աշխարհի գոյությանը, անիմաստ է, քանի որ նրա իսկ հաղորդած տվյալներից աներկբա է, որ նա քաջատեղյակ է «Աշխարհացույցին»։ Ուստի, ինչպես քննությունը ցույց կտա, նա համատեղ հիշատակելով Կորճայքն ու Պարսկահայքը, առաջինի մեջ դրել է որոշակի տարածքային ընդգրկում, չնայած. կրկնում ենք, դրանք ավելի վաղ ժամանակներում պարզապես նույնացել են։

Փավստոս Բուզանդը, նկարագրելով սպարսից համբարակապետի Հայաստան կատարած արշավանքը. նշում է, որ հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը նրա զորքերը ջախջախեց «ի գաւառն Կորճէից ի Սաղամաս»[43]։ Պատմիչը ևս երկու անգամ հիշատակում է Կորճեից գավառը և, դատելով այն բանից, որ հետագա դեպքերը ծավալվում են Կոդ և Բագրավանդ գավառներում[44], խոսքը վերաբերում է նույն երկրամասին։ Սաղամասի տեղադրությունը հայտնի չէ։ Այն նույնական է հետագայի Սալմաստ քաղաքին։ Տարածքային առումով, ինչպես տեսնում ենք, Բուզանդի Կորճէքը դուրս է Կուրճանի սահմաններից, կարծես թե ավելի մեծ վարչական միավոր է, որը նույնանում է Պարսկահայքին կամ էլ նրա մի նշանակալից հատվածին։ Ըստ որում, Կորճեքի տարածքային այսպիսի ընդգրկմամբ հիշատակությունը լոկ Բուզանդի ստեղծագործության արդյունքը չէ, որովհետև, մեր կարծիքով, Կորճեքի որպես աշխարհի հիշատակությունը պահպանել է անգամ Պտղոմեոսի «Աշխարհագրությունը»։ Հույն աշխարհագրագետը Մեծ Հայքում հիշատակում է Κοριαία և Κωταία ստրատեգիա-զորավարությունները, որոնք, դատելով Հայաստանի երկրամասերի նկարագրության աշխարհագրական հերթականությունից, գտնվում էին Կորճայքի և Պարսկահայքի տարածքում։ Նա գրում է. "Ἐν. δὲ τῷ λοιπῷ καὶ μεσημβρινωτέρῳ τμήματι μεταξὺ μὲν Εὐφράτου καὶ τῶν Τίγριδος πηγῶν ἡ τε Ἀνζιτηνὴ καὶ ἡ ὑπ αὐτὴν Θωσπῖτις εἶτα ἡ Κοριαία", («Մնացած՝ դեպի հարավ ընկած հատվածում, Եփրատի և Տիգրիսի ակունքների միջև [գտնվում են] Անզիտենեն և նրանից ներքև Թոսպիտիսը, այնուհետև և Կորիայան»)[45]։

„Ἀπ' ἀνατολῶν δὲ τῶν τοῦ Τίγριδος ποταμοῦ πηγῶν ἡ τε, Βαγραυανδηνὴ αἱ ὑπ' αὐτὴν ἡ Γορδυηνή, ης ἀνατολικωτέρα ἡ Κωταία καὶ ὑπ' αὐτὴν Μάρδοι". («Տիգրիս գետի ակունքից դեպի արևելք [գտնվում են] և Բագրավենդենեն և նրանից ներքև՝ Գորդյուենեն, որից ավելի արևելք՝ Կոտայան և նրանից ներքև՝ մարդերը»)[46]։

Առաջին տեղեկության համաձայն Թոսպիտիս ստրատեգիա-զորավարությանը, որն ընկած արևմտյան Վասպուրականն է, հաջորդել է Κοραία ստրատեգիա-զորավարությունը, որը, համաձայն նկարագրության աշխարհագրական հերթականության, կարող է նույնանալ և՛ աշխարհացույցյան Կորճայքին, և՛ Պարսկահայքին։ Κοριαία-ն ձեռագրերում հանդիպում է նաև Κορίανα. Coriana. Coreana, Corica, Κορινέα տարընթերցումներով[47]. Հետևաբար, եթե նախնական է Κοριαία-ն, ապա հիշյալ զորավարությունը նույնանում է Կորճայք աշխարհի տարածքին, բացառյալ Կորդուքը, իսկ եթե նախնական է Κορίανα-ն, ապա չի բացառվում նրա համընկնումը Պարսկահայքին։ Ըստ որում դժվար չէ համոզվել, որ անկախ զորավարության Κοριαία կամ Κορίανα անվանումից, մենք գործ ունենք τ>ι շփոթի հետ։ Բավական է, որ τ-ի գլխամասը ինչ-ինչ պատճառներով ընկներ, և Κορταία-ն կամ Κορτανα-ն կվերածվեր Κοριαία-ի կամ Κορίανα-ի։ Հետևաբար, ելնելով հայկական նյութի

---

[43] Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, էջ 158։

[44] Նույն տեղում, էջ 251, 255։

[45] Claudii Ptolemaei Geographia, E codicibis, recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Mullerus. Vol. primi, pars secunda, Parisiis. 1901, V. 12, 8. (Թարգմանությունը կատարել է Գ. Մուրադյանը)։

[46] Նույն տեղում, V, 12, 9։

[47] Նույն տեղում, V, 12, 8-ի ծանոթագրությունները։

ընձեռած հնարավորություններից, կարելի է առանց մազաչափ սխալվելու եզրակացնել, որ բնագրում զորավարության անվանումը եղել է սկզբնապես Κορταια կամ Κορτανα որոնցից առաջինը ամբողջությամբ համարժեք է հայկական Կորճայք աշխարհանվանը (Κορται=Կորճայ, a=ք)։ իսկ երկրորդը կարող էր առաջանալ Կորճան կամ Կորիճան իրանական տարբերակից և համապատասխանել Պարսկահայք-Կորճայքին։ Սակայն երկրորդ տարբերակը զուտ տեսական է, ինչպես շուտով կհամոզվենք, ուստի մենք հակված ենք կարծելու, որ Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ Κορταια=Κορταία-ն համապատասխանում է Կորճայք աշխարհի արևելյան հատվածին, որովհետև Κωταια-ի մասին խոսելիս, Պտղոմեոսը գրում է, որ վերջինս գտնվում էր Կորդուքից ավելի արևելք (ἀνατολικωτέρα). իսկ նրանից անմիջապես ներքև գտնվում էր Μαρδοι- Մարդպետականը։ Եզրակացությունը որոշակի է և հստակ. Κοσιαία-ի նույնացումը Պարսկահայքին բացառվում է։ Պարսկահայքին տարածքով համապատասխանում է Κωταια-ն, որը ոչ թե գտնվում է Կորդուքից անմիջապես արևելք, այլ ավելի արևելք, այսինքն անգամ Պտղոմեոսը ընդունում է նրանց ոչ սահմանակից լինելը և նրանց միջև ինչ-որ երկրամասի (անշո՛ւշտ արևելյան Կորճայքի) գոյությունը։ Κωταία-ն ձեռագրերում հայտնի է Κοταια, Κορρα, Corea, Cortaea տարընթերցումներով[48], որոնցից դժվար չէ հետևցնել, որ զորավարության նախնական անվանումը ավելի շուտ Κωρταια է, քան Κωταια։ Եվ քանի որ Κωρταία-ից ներքև գտնվում էր, ինչպես նշվեց, Μαρδοι- Մարդպետականը, ապա այն անվերապահորեն նույնանում է Փավստոս Բուզանդի հիշատակած Կորճէքին և համապատասխանում է Պարսկահայքի տարածքին։ Նման քննության լույսի ներքո դժվար է համաձայնել Ն. Ադոնցի այն տեսակետին, թե իբր Պտղոմեոսի հիշատակած Κωταία-ն Այրարատ աշխարհի Կոտայք գավառն է[49]։ Ի մի բերելով վերոգրյալը, մենք գտնում ենք, որ Կուռիճան գավառանունը պահպանել է Պարսկահայքի մեկ այլ՝ Կորճայք անվանումը[50]։ Նման եզրակացության օգտին է խոսում նաև Κωταια [Κω(ρ)ταια] զորավարության անվան օմեգայով գրությունը, որը և ցույց է տալիս Կուռիճան անվանման հանդես գալու հնարավորությունը։ Ինչպես դժվար չէ եզրակացնել Պտղոմեոսի «Աշխարհագրությունից», Կորճայք կամ Կորճէք տեղանունը Պարսկահայքի տարածքի համար օգտագործվում էր արդեն II դարում, չնայած չի բացառվում նրա ավելի վաղ կիրառման հավանականությունը[51]։

Այլի կամ Կուռիճան գավառին Պարսկահայքի աշխարհացույցյան նկարագրության մեջ հաջորդում են Մարի գավառը և Թրաբին։ Ըստ Ս. Երեմյանի Մարի գավառը տեղադրվում է Բարանդուզչայ գետի հովտում, որն այժմ հայտնի է Մերգեվեռ (կամ Մարգավառ—Հ. Բ.) անունով[52], իսկ Թրաբին՝ Բերդեսուրչայ (հավանաբար՝ Բերդաձոր—Հ. Բ.) գետի հովտում, որն այժմ հայտնի է Թերգեվեռ (կամ Թարգավառ—Հ. Բ.) անունով և, հեղինակի կարծիքով, իր մեջ ուներ Որմի (ներկայումս՝ Ուրմիա) և Նախճավան (ներկայումս՝ Նախի-

---

48 Նույն տեղում, V, 12, 9-ի ծանոթագրությունները։

49 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 302. «Котаня, например. была знакома еще Птолемею, но в армянской литературе встречается впервые у Себеоса в VII в.».

50 Հ. Հյուբշմանի կարծիքով «Կորճէից» սեռականը ենթադրել է տալիս ուղղականում «Կորճեայք» ձևի գոյությունը (տե՛ս նշվ. աշխ., էջ 85)։

51 Ղ. Ինճիճյանը հակված է կարծելու, որ Այլին կամ Կուռիճանը Պլինիոսի կողմից հիշատակված (VI, 26) ալոնների (Ալօնք) գավառն է, որի միջով հոսում է Զերբիս գետը և թափվում Տիգրիսի մեջ։ Հեղինակը Զերբիսը նույնացնում է Զարբ (իմա՛ Զաբ) գետին։ Նրա մեկ այլ կարծիքի համաձայն Այլին կարող է համընկնել Ստրաբոնի հիշատակած Քալոնիտիսին։ Սակայն Այլիի հստակ տեղադրությունը Որսիրանքից արևելք բացառում է անվանի հայագետի թե՛ մեկ և թե՛ մյուս եզրակացությունը (տե՛ս Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 152)։

52 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65։

ջևանթեփե) քաղաքները[53]։ Տեղադրությունները ընդհանուր առմամբ ընդունելի են, սակայն դրա հետ մեկտեղ կան որոշ հանգամանքներ, որոնք նման տեղադրության դեպքում լուսաբանության կարիք են զգում կամ չեն բացատրըվում։ Ինչպես արդեն նշվեց, ցուցակում Այլի կամ Կուռիճան գավառին անմիջապես հաջորդում է Մարի գավառը, սակայն հեղինակի տեղորոշմամբ նրանց միջև ընկնում է Թրաբի գավառը, որ, կարծում ենք, չի բխում Պարսկահայքի նկարագրության օրինաչափություններից։ Հարցիս մեջ հստակություն մտցնելու համար ավելորդ չենք համարում հպանցիկ անդրադառնալ հիշյալ տարածքի XIX դարի և XX դարի սկզբի վարչական բաժանմանը։ 1849—52 թթ. պարսկա-թուրքական սահմանագիծը ճշտելու համար ստեղծված հանձնաժողովի անդամներից Դերվիշ-փաշայի քարտուղար Մեհմեդ-Խուրշիդ-էֆենդին[54], Պարսկաստանի ներկայացուցիչ Մուշիր-էդդոուլե Միրզա-Ջաֆար-խանը[55] և Ռուսաստանի միջնորդ ներկայացուցիչ Ե. Ի. Չիրիկովը[56] թողել են հիշյալ երկրամասի մանրամասն նկարագրությունը։ Հատկապես մանրամասն է և արժեքավոր Մեհմեդ-Խուրշիդ-էֆենդիի նկարագրությունը, որը հարակից նյութերի հետ տալիս է Պարսկահայքի տարածքի վարչական բաժանման մանրազնին պատկերը։ Ըստ նրա Ուրմիայի մեջ մտնող Մերգեվյար շրջանը կամ մահալը բաղկացած է եղել 36 գյուղերից, որոնց տեղադրությունը հստակ վըկայում է, որ Մար գավառը արևմուտքում տարածվում էր մինչև պարսկա-թուրքական սահմանը, իսկ արևելքում՝ մինչև Մարգավառ (այսպես է կոչվում Բարանդուզչայ գետը վերին հոսանքի շրջանում) և Կալախանտ գետակների ջրբաժանը՝ Աղ և Բերդի-Քերյուշկ լեռնագագաթներով, հյուսիսում՝ մինչև Ասսյե լեռը և Բարանդուզչայ ու Բերդեսուրչայ (Բերդաձորի ջուր) գետերի ջըրբաժանը, իսկ հարավում՝ մինչև Բարանդուզչայ և Գադեր (կամ Գետառ) գետերի ջրբաժանը Դալամպեր, Ոպուղ, Ջակի և Սեկուչե լեռնագագաթներով[57]։ Մարգավառից հյուսիս գտնվում էր Բերդեսուր (Բերդաձոր) մահալը, որը հայտնի է նաև Դաշտ մահալ անունով։ Վերջինս արևմուտքում տարածվում էր մինչև պարսկա-թուրքական սահմանագիծը, արևելքում՝ մինչև Շհար կամ Շահար մահալը, որ զբաղեցնում է Որմի (ներկայումս՝ Ուրմիա) քաղաքի շըրջակա տարածքը, իսկ հյուսիսում՝ մինչև Դերե-Շինավա (Ռոուզեչայ գետի անունը վերին հոսանքի շրջանում) և Բերդեսուրչայ գետերի ջրբաժանը[58]։ Մեզ հետաքրքրող Թարգավառ մահալը, համաձայն Խուրշիդ-էֆենդիի տվյալների, գտնվում էր Դերե-Շինավա գետի և Նազլուչայ գետի Էլի կամ Այլի վտակի ավազաններում, արևմուտքում սահման ունենալով պարսկա-թուրքական սահմանը, հարավում՝ Բերդասուր կամ Դաշտ մահալը, արևելքում՝ Ռոուզեչայ մահալը և հյուսիսում՝ Բրադոստ կամ Բաբադոստ մահալը, տարածվելով հա-

---

53 *Նույն տեղում, էջ 54։*

54 Сияхэт-Намэ-и-Худуд (Описание путешествия по турецко-персидской границе), составил Хуршид-Эфенди, бывший секретарь турецкого комиссара по разграничению между Турциею и Персиею, с приложением отчета персидского комиссара о том же путешествии. С турецкого и персидского перевел М. А. Гамазов, с картою. СПб., 1877, с. 1—361.

55 *Նույն տեղում, էջ 365—424։*

56 Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению (1849—1852), издан под редакциею М. А. Гамазова, бывшего секретаря русской посреднической комиссии. СПб., 1875, *տե՛ս* Записки кавказского отдела императорского русского географического общества, книжка IX, изданная под редакциею М. А. Гамазова (с картою). СПб., 1875, с. 1, ст. 1—803.

57 Сияхэт-Намэ-и-Худуд, с. 295—296. *Տե՛ս նաև* Сияхэт-Намэ-и-Худуд. Приложение, с. 408—410. Путевой журнал Е. И. Чирикова, с. 466—469. *Ե. Ֆրանգյան. Ատրպատական. Թիֆլիս, 1905, էջ 250։ Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։*

58 Сияхэт-Намэ-и-Худуд, с. 296—298. *Տե՛ս նաև* Сияхэт-Намэ-и-Худуд. Приложение, с. 410—411։ *Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։*

վանաբար մինչև Ջարդա լեռը և Նազլուչայ ու Բրադոստ գետերի ջրբաժանը[59]։ Թարգավառի տարածքը փոքր է, որը և կասկածի տակ է դնում նրա բավական նշանավոր լինելը XVI դարում։ Համաձայն Շարաֆ-խան իբն Շամսադդին Բիդլիսիի «Շարաֆ-նամեի», Թարգավառը Սոմայի և Դուլի (Դոլ) հետ միասին մտել է Ուրմիայի մեջ և Շահ-Իսմայիլի կողմից հանձնվել է Ղազի-Ղռանին (Гази-Киран)[60]։ Ըստ քուրդ հեղինակի մեկ այլ տեղեկության, սկզբնապես Թարգավառի շրջանը մտել է Բրադոստ վիլայեթի (թերևս նույնանում է Ուրմիայինին—Հ. Բ.) մեջ, անջատվել է վերջինից Սուլթան Ահմադի կողմից, որը Ղազի-Ղռանի հայրն էր, և այնուհետև ձեռքից ձեռք է անցել[61]։ Անկասկած է, որ Շարաֆ-խան Բիդլիսիի հիշատակած Թարգավառը անհամեմատ մեծ է եղել և ընդգրկել է նաև հարևան որոշ մահալների տարածքը։ Աշխարհագրական տեսակետից, գրեթե կասկածից վեր է, որ Էլիի շրջակայքը, Բերդեսուր կամ Դաշտ մահալի տարածքը (պատահական չէ, որ հաճախ Թարգավառը և Դաշտը հանդես են գալիս որպես մեկ վարչական միավոր) մինչև պարսկա-թուրքական սահմանագծի կայունացումը մտել են Թարգավառի մեջ. իսկ՝ հենվելով քուրդ պատմիչի տվյալների վրա, կարելի է եզրակացնել, որ XVI դարում Թարգավառն ընդգրկել է մինչև Դուլ (Դոլ) ընկած տարածքը, այսինքն վարչականորեն իր մեջ ներառել է նաև Մար գավառը[62]։ Թարգավառի մեջ անգամ Էլիի շրջակայքի մտնելը բացառում է Թարգավառի և Թրաբի գավառի նույնացումը։ Ուստի և մենք հակված ենք կարծելու, որ Թարգավառ և Թրաբի տեղանունների նմանությունը պատահական է[63]։ Թարգավառ տեղանվան բացատրությունը տալիս է Հ. Մարկվարտը, որ կարծում ենք մեծ հավանականություն ունի։ Հենվելով Հ. Կիպերթի նեստորական տեղեկատուի տեղեկությունների վրա, նա ցույց է տալիս, որ Ter-gavar և Mer-gavar անունները ըստ ասորերենի կապվում են Gavar գավառի անվան հետ։ Այս անունների իմաստը բացատրվում է زار و مار («ներքին և վերին») արտահայտությամբ, այսինքն Ter-gavar նշանակում է «Gavar-ից ներքև», Mer-gavar՝ «Gavar-ից վերև»[64]։ Կարծում ենք, որ այս նոր հասկացությունների հանդես գալը պայմանավորված էր Մարի գավառի գոյությամբ և ասորական բնակչության դեպի Պարսկահայք ունեցած տեղաշարժով։ Ընկալվելով ասորիների կողմից որպես «Գավառից վերև», Մարի գավառանունը բնականաբար ծնել է «Գավառից ներքև» հասկացությունը, որն արտահայտվել է Թարգավառ անունով։ Ավելին, նման մոտեցման դեպքում չի բացառվում, որ Որսիրանք գավառի ուշ շրջանի Գավառ անվանումը կարող էր ծնվել նույնպես Մարի գավառի ասորական մեկնաբանության հետևանքով։ Թերևս դրան նպաստել է

---

[59] Сняхэт-Намэ-и-Худуд, с. 299—300. *Տե՛ս նաև* Сняхэт-Намэ-и-Худуд, Приложение, с. 411—413։ *Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։*

[60] Ш а р а ф-Х а н и б н Ш а м с а д д и н Б и д л и с и. Шараф-Намэ. Т. I, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой. М., 1967, с. 345.

[61] *Նույն տեղում, էջ 348։ Տե՛ս նաև* И. П. П е т р у ш е в с к и й. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX в. Л., 1949, с. 127, 128.

[62] Ш а р а ф-Х а н и б н Ш а м с а д д и н Б и д л и с и, с. 345. «...пожаловал ему (Гази-Киран.—*Հ. Բ.*) вместе с грамотой на правление округа Тергевер, Сомай, Дул вместе с прилегающими и относящимися к ним районами и крепостями».

[63] *Հ. Մարկվարտը, անդրադառնալով Ալլի կամ Ելի գավառի տեղադրությանը, գրել է, որ «այն պետք է փնտրել միայն պարսկա-թուրքական սահմանը բաժանող լեռնաշղթայի մյուս կողմում՝ Տերգյավար բարձրավանդակի վրա կամ Բարադոստի շրջանում, նույնանում գետի վերին հոսանքում (այս գետը միանում է Նազլուչայինն)» (Տե՛ս Պարսկահայք նահանգը, էջ 199), ինչպես տեսնում ենք, գերմանացի հայագետը ևս Թարգավառի շրջանում է փնտրել Ալլի գավառը։*

[64] *Հ. Մ ա ր կ վ ա ր տ. Նշվ. աշխ., էջ 199։ Տե՛ս նաև* Zaratüst-nama, v. 1325, ed Rosenberg.

այն հանգամանքը, որ Մարին Պարսկահայքի այն 2 գավառներից է, որ օգտագործվում է «Աշխարհացոյցում» Գավառ բառի հետ միասին։

Նշված հանգամանքները մեզ իրավունք են տալիս ընդունելու Մարի գավառի Ս. Երեմյանի տեղադրությունը Բարանդուզչայ գետի ողջ ավազանում։ Սակայն Ուրմիո լճի մերձափնյա շրջանում, որտեղ բացառությամբ գետերի այլ բնական սահմանաբաժաններ չկան, սահմանը, ամենայն հավանականությամբ, անցել է ոչ թե Բարանդուզչայ գետի հյուսիսակողմով, այլ հենց Բարանդուզչայ գետով, որն, ինչպես ճիշտ ենթադրում է Ս. Երեմյանը, հնում պետք է կրեր Մարի գետ անունը[65]։ Նման տեղորոշման դեպքում պատմական Մարի գավառը իր մեջ ներառել է ոչ միայն Մարգավառ, այլև Բարանդուզչայ մահալների տարածքը։

Հշտելով Մարի գավառի տեղադրությունը, մենք կարող ենք որոշակիացնել նաև Այլի կամ Կուռիճան և Թրաբի գավառների դիրքը։ Ըստ «Աշխարհացոյցի» Մարի գավառի անմիջական սահմանակցության վրա գտնվող Այլին կամ Կուռիճանը իր մեջ պետք է առներ Դաշտ, Թարգավառ և Բրադոստ մահալները, ինչպես նաև մինչև Վասպուրականի լեռները կամ Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթան ընկած տարածքը, որ ներկայումս Թուրքիայի սահմաններում է։ Ինչ վերաբերում է արևելյան սահմանին, ապա այն պետք է անցներ Պարսկահայքը գրեթե երկու հավասար մասի բաժանող հյուսիսից հարավ ձգվող լեռներով, որոնք անջրպետում են ֆիզիկաաշխարհագրական տեսակետից լճափնյա շրջանը Վասպուրականին և Կորճայքին հարևան շրջանից։ Որ հիշյալ լեռները կապես աղղում են վարչական բաժանման համակարգի վրա, պարզ երևում է մեզ քաջ հայտնի ուշ շրջանի վարչական բաժանումներից։ Մահալների մի խումբը զբաղեցնում էր լճափնյա արգավանդ շրջանը, իսկ մյուս խումբը՝ նշված լեռների և պարսկա-թուրքական սահմանի միջև ընկած տարածքը։ Այլ խոսքով, ոչ մի մահալ Սալմաստից հարավ ընկած հատվածում չէր ձգվում պարսկա-թուրքական սահմանից մինչև Ուրմիո լճի ափերը։ Մակերևույթից բխող ճանապարհային ցանցը ևս իր երկու մայրուղիներով, որոնք զուգահեռաբար ձգվում էին հյուսիսից հարավ, նպաստում էր նմանօրինակ վարչական բաժանման ձևավորմանը։

Այս տեղեկությունների հենքի վրա գրեթե աներկբա է դառնում Թրաբի գավառի տեղորոշումը Ուրմիո լճի արևմտյան ափին։ Վերջինս պետք է զբաղեցներ Մարի (Բարանդուզչայ) գետից մինչև Անզալ մահալն ընկած տարածքը, այսինքն Նազլուչայ, Ռոուզեչայ և Շահարչայ (Բերդեսուր կամ Բերդաձոր գետը ստորին հոսանքի շրջանում) գետերի ստորին հոսանքի շրջանը։ Շատ հնարավոր է, որ Թրաբի գավառանունը իրանական ծագում ունի։ Բոլորովին էլ չհավակնելով վերջնական բացատրության, կարծում ենք, որ այն կարող էր նշանակել «պղտոր ջուր», հանգամանք, որ կարող էր կապվել Ուրմիո լիճը թափվող, առատ տիղմ բերող գետերի կամ էլ ձնհալքի ջրերի հետևանքով Ուրմիո լճի մերձափնյա շրջանի ողողման և ճահճակալման հետ։ Բնական է, եթե գավառանունը իր ծագումով պարտական էր լճին, ապա ոչ մի Թրաբի գետ չէր լինի, սակայն եթե կապված էր գավառով հոսող գետերից որևէ մեկի տիղմառատության հետ, ապա Թրաբի անունը հավակնել կարող են Նազլուչայ և Շահարչայ (Բերդեսուրչայ) գետերը։ Ս. Երեմյանը գտնում է, որ Թրաբի է կոչվել Բերգեսուրչայը[66], որ միանգամայն հավանական է, որովհետև նրա հովտում է գտնվում երկրամասի կենտրոն Ուրմիա քաղաքը (հնում՝ Որմի)։ Դեռևս X դարում գավառը հայտնի էր Թովմա Արծրունուն Թրաբ անունով[67]։

Հաջորդ **«Արիսի, որ է Ովէա»** *գավառը ենթադրելի է Ուշնուի շրջանում, ինչպես և տեղադրում է Ս. Երեմյանը։ Նրա կարծիքով գավառի և դրանով իսկ Պարսկահայք աշխարհի հարավային սահմանը եղել է Աբասիի գետը (ներկա-*

---

[65] *Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65։*

[66] *Նույն տեղում, էջ 54։*

[67] *Թովմա Արծրունի, էջ 292. «...մտին ի Թրաբ գաւառ եւ ի Շնաւհ»։*

յումս՝ Գետառսու), ուստի Արիսին սրբագրում է Արասխ, ենթադրելով ձեռագրում նրա աղճատում[68]։ Միանգամայն ուրույն և ընդունելի է Գետառսու անվան բխեցնելը հեղինակի կողմից Արասխ անվանումից։ Եվ իրոք, եթե գոյություն է ունեցել «Գետ Արասխ» ձևը, ապա այն թյուրքական լեզուների ազդեցությամբ և ժողովրդական ստուգաբանության շնորհիվ կարող էր վերածվել «Գետառսու»-ի[69]։

Սակայն դրա հետ մեկտեղ հարկ ենք համարում կանգ առնել մեկ հանգամանքի վրա, որը կարող է կասկածի տակ դնել նման անցումը։ Պատմական Արասխը ներկայումս կոչվում է ոչ թե Գետառսու, այլ Գադեր կամ Գոդեր, իսկ վերին հոսանքի շրջանում՝ Աբի-Սյար-Գադեր (Սյար-ի-Գադեր)[70]։ Ուստի անհրաժեշտ է նախ պարզել, թե գետը Գետառսու կոչվե՞լ է արդյոք։ Գադեր գետի՝ Կելեշին և Շատի լեռնագագաթներից սկիզբ առնող վտակը կոչվում է Գետառչայ (Գեդերչայ)[71], ուստի թերևս սա է պահպանել հինավուրց Արասխ անունը, եթե իհարկե գոյություն ունի նաև Գետառսու զուգահեռ ձևը։

Արիսի Արասխ սրբագրելը բանական է, սակայն չի բացառվում, որ Արասխ կոչվել է միայն գետը, իսկ գավառը կոչվել է Արիսի։ Կարծում ենք, որ «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության մեջ Արիսիին համապատասխանող Ացուերս, Այուերս և Ըցտես տարընթերցումները առաջացել են «Արիսի, որ է Ովէա»-ի կամ «Արասխ, որ է Ովէա»-ի աղավաղումից։ Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 1770, 1518 և 1482 ձեռագրերում հանդիպում է նաև «Ուեսս» տարընթերցումը, որ մեր կարծիքով առաջացել է «Ովէա»-ից։ Ավելին, կարծում ենք, որ այն հնարավորություն է տալիս վերականգնելու գավառանվան նախնական ձևը՝ «Ովէս», որի ուղիղ ձևը կլիներ «Ովէք» կամ, որ ավելի հին է, «Ովայք», որից էլ առաջացել է «Ուեսս»-ը։

Արիսի (կամ Արասխ) գավառի կենտրոնը եղել է Շնոհը (Շնաւհ, ներկայումս Ուշնուէ կամ Օշնևիե), որի անունը Հ. Մարկվարտի կարծիքով՝ ծագում է ավեստայի Xšnoθra-ից (գոհացնելը, հանդարտեցնելը) կամ հայերեն փոխառյալ շնորհ բառից[72]։ Արդեն զարգացած ավատատիրության շրջանում Շնոհ քաղաքի անունը անցնում է գավառին։ Թովմա Արծրունին, դատելով նրա «իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս, գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ. հանեն զսուր, վարեն ի գերութիւն, եւ առնուն աւար, եւ ի յանցին դառնան ի Ծուաշ եւ ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն։ Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ, զԼեկ, եւ զԱզզի, եւ զԿրերեացն, եւ ի Ճախուկ գաւառէ։ Ազդ եղեալ Շապհոյ եղբօր Թադէոսի Շերեփեանց, եւ ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն, եւ անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ. յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով եւ զաւարն ի ձեռաց նոցա, եւ վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ծուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաչանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ։ Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաբ գաւառ եւ ի Շնաւհ»[73] վկայությունից, Շնավհը համարում է Պարսկահայքի ամենահարավային գավառը, սակայն այլ կապակցությամբ, ինչպես վերը ցույց տվեցինք Այլի գավառի տեղադրության հետ կապված, Այլիից հարավ ընկած հողերը համարում է Ատրպատականի մաս[74]։ Ըստ Հ. Մարկվարտի, նման

---

68 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 38։

69 Նույն տեղում, էջ 38—39։

70 Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։ Сияхэт-Намэ-и-Худуд, с. 344 (Кадран=Գադերան). Сияхэт-Намэ-и-Худуд, Приложение, с. 407.

71 Ռուսական տասվերստանոց քարտեզի № 100 պլանշետը։

72 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 200—201։

73 Թովմա Արծրունի, էջ 291—292։

74 Նույն տեղում, էջ 165—166. «...հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Եւլայ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից»։

մոտեցումը բխում է իբր այն հանգամանքից, որ Շնավհ գավառի բացակայությունը «Աշխարհացոյցի» բնագրում ստիպել է նրան հիշյալ տարածքը վերագրել ոչ թե Պարսկահայքին, այլ Ատրպատականին։ Շարունակելով իր միտքը զարգացնել, գերմանացի հայագետը եզրակացնում է, որ իբր ըստ «Աշխարհացոյցի» (հեղինակի մոտ՝ ըստ Շիրակացու) Պարսկահայքի և Ատրպատականի միջև սահմանն անցել է Ուշնուից հյուսիս, առաջինի մեջ թողնելով Բարանդուզչայ գետի ակունքները, իսկ հարավային սահմանագլխին գտնվել է Պաբեղի հին ամրոցը[75]։ Որպես հաստատում իր տեսակետի նա բերում է Արծրունյաց պատմիչի «եւ Գուրգէն (Գագիկ Արծրունու եղբայրը ժառանգեց) զկողմանս արեւելից, յելից Աղբագոյ եւ որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչեւ ի մուտս Կորդաց, եւ ուր եւ ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ, եւ այսոքիկ այսպէս»[76] վկայությունը և ենթադրում, որ Կորդք անվան տակ պետք է հասկանալ քրդական Ուշնոհ գավառը[77]։ Ավելին, նա հակված է կարծելու, որ Կորդքը նույն իմաստով օգտագործում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին ներքոհիշյալ հաղորդման մեջ. «...ապա և թագաւորն Գագիկ հանդերձ վայելչագիտակ և բարեպաշտօն եղբարբն Գուրգենաւ ոչ սակաւ ինչ քան թէ բազում մարտս տագնապից ի վերայ պատրաստէր թշնամեացն, որ ջոկիւս առեալ էին ըստ հրամանին Յուսփայ ի կողմանս Ատրպատականի։ Եւ այսպէս առնաբար քաջութիւնս յանձին իւրեանց տպավորեալ հանդերձ սպասեալք և պայազատ գնդիւն՝ զբազումս ի Հագարացւոցն թաւալգլոր խաղացուցանէին։ Ոչ միանգամ՝ այլ և բազում անգամ ստէպ ստէպ դայս արարեալ առ ստորոտով աշխարհին Կորդաց և Ռստակաց և Ատրպատականի...»[78]։ Ցավոք, նշանավոր հայագետի կարծիքը կիսել չենք կարող։ Երբ Թովմա Արծրունին խոսում է Պարսկահայոց մահմեդական ռամիկների (գռեհիք) մասին, որոնք ապաստակում էին Մարդաստանը, Ծուաշը, Թոռնավանը, Լեկը, Ազգին, Կրերիքը և Ճահուկը, պարզորոշ վկայում է, որ նրանք վերադարձան իրենց բնակատեղիները. «ի Թրաբ գաւառ եւ ի Շնաւհ», ուստի կասկածից վեր է, որ նա Շնոհը համարում է Պարսկահայքի տարածք։ Մնացած դեպքերում Վասպուրականի պատմիչը արտացոլում է քաղաքական կացությունը, երբ Շնոհ գավառը և մինչև Այլի գավառ ընկած տարածքը մաս էին կազմում ատրպատականյան մահմեդական իշխողների տիրույթների։ Սակայն հարկ է նշել, որ անգամ այդօրինակ վկայություններում տեղ են գտել շատ հետաքրքիր վարչաքաղաքական իրողություններ, որոնց կանդրադառնանք ստորև։ Ինչ վերաբերում է «ի մուտս Կորդաց» արտահայտությանը, ապա Կորդքը Ուշնուի հետ նույնացնելու դեպքում այն չի ընկալվում։ Խնդիրն այն է, որ Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը անգամ իր ծաղկման շրջանում չի սահմանակցել և տարածքային իմաստով բավական հեռու է գտնըվել Շնոհ-Ուշնուից։ Ուստի, մեր կարծիքով Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Կորդքի տակ պետք է հասկանալ պատմական Կորդիքը, որը զարգացած ավատատիրության շրջանում ժողովրդական արտասանությամբ վերածվել էր «Կորդք»-ի։ Վերջինս հիշատակվում է Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերում, առաջինում «ամուր աշխարհն Կորդեաց» և «զԿորդիս»[79], իսկ երկրորդում՝ «Կորդրիք»[80] ձևով։ Բնագրի ներքին տրամաբանությունից բխում է այն միտքը, որ Կորդքը պետք է գըտնըվեր Կորճայք աշխարհի կողմերում, ուստի պատահական չէ, որ որոշ հրատարակիչ-ուսումնասիրողներ փորձել են Կորդքը նույնացնել Կորդուքին։ Այսպես, Վրեժ Վարդանյանը, թարգմանելով Թովմա Արծրունու «Պատմությունը»,

---

75 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 201, 207։

76 Թովմա Արծրունի, էջ 261։

77 Հ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 201։

78 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 245 և ծան. 562 (էջ 387)։

79 Փավստոս Բուզանդ, էջ 159, 209։

80 Մովսես Խորենացի, էջ 183 (II, ՈԴ)։

Կորդքը սրբագրել է Կորգուքի, որի հետևանքով հիշյալ տեղեկությունը ստացել է ներքոբերյալ տեսքը. «...ամբողջ Պարսկահայքը, մինչև Կորդուքի արևմտյան մասերը և մինչև ուր որ հնար լիներ ձեռք բերել»[81]։ Ժամանակին նույն ձևով է վարվել Մկրտիչ Էմինը Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն Հայոց»-ը հրատարակելիս. «...առ ստորոտով աշխարհին Կորդուաց և Ռըստակաց և Ատրպատականի»[82]։ Որ Կորգքը անպայման պետք է լիներ Կորդիքը և ոչ թե Կորդուքը, պարզորոշ է Թովմա Արծրունու հիշյալ վկայությունից. Արծրունյաց իշխանների գործունեությունը երբեք չի հասել Կորդուքի արևմտյան սահմանները, ուստի Կորգքի հոմարժեքությունը Կորդիքին առավել քան հավանական է։ Շնոհ-Ուշնուի պատկանելությունը Պարսկահայքին վեր է ամեն կասկածից, ուստի Հ. Մարկվարտի տեսակետը Պարսկահայքի հարավային սահմանի մասին, որն իբր անցել է Ուշնուից հյուսիս ընկած լեռներով, քննություն չի բռնում։ XV դարում արդեն Շնավհ անունը ծանոթ չէր Թովմա Մեծոփեցուն, որը քաղաքը հիշում է Օշնի անունով[83]։

Քննությունն ամբողջական չի լինի, եթե կանգ չառնենք մի հարցի վրա ևս։ Ինչպես արդեն ասվեց, Պարսկահայքի հարավային սահմանն անցնում էր Գադեր գետով, որն «Աշխարհացույցում» անվանված է Երասխ[84]։ Վերջինս հասկանալի պատճառներով չի կարող նույնանալ Երասխ-Արաքսին, որովհետև, ինչպես ճիշտ նշում է Հ. Մարկվարտը, Պարսկահայքը երբեք չի տարածվել մինչև այդ գետը[85]։ Կարելի է անշուշտ ենթադրել, որ Պարսկահայքի Երասխ գետանունը առաջացել է Արասխից Երասխ-Արաքսի ազդեցությամբ։ Չնայած չի բացառվում, որ այն իրոք կրել է Երասխ անունը, որը հետագայում հ>ա հնչյունափոխության հետևանքով վերածվել է Արասխի։ Արասխի որպես սահմանային գետի անունը պահպանել է Թովմա Արծրունին։ Խոսելով Վահրամ Չուբինի՝ հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանին ուղարկած նամակի մասին, որով նա հայերին առաջարկում էր իրեն օգնել, խոստանալով վերականգնել Հայոց թագավորությունը, նա բերում է պարսից բռնատիրոջի (ուզուրպատոր) հետևյալ խոսքերը. «...ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. եւ զոր կամիցիք արասջիք ձեզ թագաւոր, եւ յԱսորոց կողմանէ զԱսորեստան, եւ զՄծուին, եւ զՆուշիրական մինչեւ ի սահմանս Տաճկաց։ Եւ ես մի իշխեցից քան զԱրասխ անցանել յայդ կոյս...»[86]։ Նույն տեղեկությունը, որ Թովման անկասկած քաղել է Սեբեոսից, վերջինիս մոտ կրում է ներքոբերյալ տեսքը. «...ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւն. զոր և դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր։ Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցդուռն Աղուանից. ի յԱսորուց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրծուին և զՆոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արեւմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացւոց։ Եւ ես մի իշխեցից քան զՋարասպ անցանել յայնկոյս...»[87]։ Համադրելով այս մեջբերումները, մենք տեսնում ենք, որ Թովմա Արծրունու երկում հանդիպող «եւ յԱսորոց կողմանէ զԱսորեստան» արտահայտությունը պետք է լինի «և յԱսորուց կողմանէ

---

81 Թովմա Արծրունի և Անանուն. Պատմություն Արծրունյաց տան, ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեժ Վարդանյանի. Երևան, 1978, էջ 240։

82 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 245։

83 Թովմա Մեծոփեցի. Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց. Փարիզ, 1860, էջ 94. «Այլ և ի Թաւրէզ քաղաքէն եկեալ էին անդ Հեր և Զարեւանդ. Օշնի եւ Աղբակ»։

84 Հ. Մարկվարտի կողմից Երասխի նույնացնելը Բարանդուզչային ժխտվում է վերը կատարված քննությամբ։ Սակայն Բարանդուզչայի որպես սահմանային գետի տեսակետը բացառվում է նաև տվյալ տարածքի մակերևույթի պատճառով։ Եթե այդ գետը լիներ սահմանագիծ, ապա Մարգավառը կամ պատմական Մարի գավառը դուրս կմնար Պարսկահայքից։

85 Հ. Մարկվարտ. Պարսկահայք նահանգը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 212։

86 Թովմա Արծրունի, էջ 95։

87 «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 78։

զԱրուաստան»[88], «Նուշիրական»-ը՝ «Նոր Շիրական»։ Տարբեր մեկնություններ և ենթադրությունների տեղիք է տալիս սեբեոսյան «Զարասպի» և Թովմայի «Արասխի» համեմատությունը։ Սեբեոսի պատմության ձեռագրերում Զարասպը հանդիպում է առանց «զ» նախդիրի, որը և իրավունք է տվել Թադեոս Միհրդատ Տեր-Աստվածատրյան Միհրդատյանցին և Քերովբե Պատկանյանին հրատարակելիս այն ընկալելու որպես զԱրասպ։ Ստ. Մալխասյանցը, Սեբեոսի պատմությունը հրատարակելիս, վերականգնել է Զարասպ ձևը։ Ավելի ուշ ուսումնասիրողները հետևել են Միհրդատյանցին ու Պատկանյանին կամ էլ Մալխասյանցին ու նրա կողմնակիցներին։ Ավելին, Մալխասյանցի տեսակետը առավել հիմնավորելու տեսանկյունից Գ. Գրիգորյանը առաջարկել է Զարասպին հավելել որոշյալ հայցականի «զ» նախդիրը[89]։ Սեբեոսի բնագիրը հրատարակելիս «զ» նախդիրը ավելացրել է Գ. Աբգարյանը[90], սակայն իր ժամանակին զարմանալիորեն այդ չի կատարել «Զարասպ» ձևը վերականգնած Ստ. Մալխասյանցը[91]։ Հ. Մարկվարտը[92] առաջնությունը տվել է «զԱբասպ» ձևին և այն նույնացրել Թովմա Արծրունու երկի «Արասխ»-ին։ Առաջին հայացքից թվում է, որ աներկբայորեն պետք է առաջնությունը տալ Սեբեոսի «Զարասպ» ձևին և Թովմայի հիշատակած «Արասխ»-ը սրբագրել Զարասպ, ինչպես կատարել է Վ. Վարդանյանը[93], սակայն չպետք է մոռանալ, որ սրբագրումներ կարող են կատարվել ոչ միայն առավել նոր երկերում հին աշխատությունների հիման վրա, այլև հին բնագրերում, առավել ուշ հանդես եկած և այդ բնագրերը օգտագործած աշխատանքների հիման վրա։ Տվյալ դեպքում «Աշխարհացույցում» հանդիպող «Երասխ» գետանունը որոշակիություն է մտցնում նաև Թովմա Արծրունու «Արասխ»-ին, ուստի «զ» նախդիրի կարծեցյալ բացակայությունը երևութական է Սեբեոսի երկում։ «Զարասպը» պետք է ընկալել որպես «զԱրասպ», իսկ որ ավելի ճիշտ է՝ «զԱրասխ»։ Մեր կարծիքով, սկզբնապես բնագրում եղել է «զԱրասխ», սակայն Սեբեոսի երկում էլի մի քանի անգամ հանդիպող Զարասպի ազդեցությամբ գրիչներն իրենք են այն վերածել «Զարասպ»-ի[94]։

(Շարունակելի)

---

88 Թովմա Արծրունի և Անանուն, էջ 106, ծան. 236 (էջ 350)։

89 «Հանդես ամսօրյա», 1968, էջ 111։

90 Սեբեոս, էջ 78։

91 Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց. Երևան, 1939, էջ 39։

92 Հ. Մարկվարտ, նշվ. աշխ., II, էջ 212։ Տե՛ս նաև J. Marquart. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919, S. 68 (ծան. 3)։ Հ. Մանանդյան. Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 293։

93 Բովմա Արծրունի և Անանուն, էջ 106, ծան. № 238 (էջ 351)։

94 «Ձև ևս մի իշխեցից քան Զարասպ անցանել յայնկոյս» հատվածի մասին տե՛ս Սեբեոս, ծան. № 204 (էջ 248—249)։